



“ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.


ՀԱՏՈՐ ԺԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1887

ԹԻՒ 8

ԼՈՐՏ ՔԵՅՐՆԶ

Երկու հարիւր տարի առաջ յԵւրոպայ կը տիրէր ահագին կեղծամ (սուս մազ) դներու հետաքրքրաշարժ սովորութիւնը: Փոյթ չէր թէ ի՞նչպէս առատ և գեղեցիկ ըլլար մէկու մը մազը, նորաձեւութիւնը (ֆոֆ) կը պահանջէր որ նա ծածկէր իւր գլուխը շինծու մազով որ նման էր բնական մազի և որ երբեմն կը շինուէր մարդու մազէ բայց աւելի հասարակօրէն՝ բամպակ կամ մետաքս թելէ, և անոր վրայ ճերմակ փոշի կը ցանուէր: Այս յիմարական սովորութիւնը խափանուած է այժմ, բայց զայն սակաւին կը պահեն Մնդղիայի դատաւորք: Երբ և նախագահեն դատարանին մէջ, կը հագնին մասնաւոր զգեստ և կը դնեն իրենց գլուխը երկայն սպիտակ կեղծամ ինչպէս կը ցուցուի պատկերին մէջ:



ԼՈՐՏ ՔԵՅՐՆԶ

Հոս ցուցուած դատաւորը կը վարէր Մնդղիոյ Լորտ Աւագ դատաւորի պաշտօնը: Լորտ Աւագ դատաւորն է բարձրագոյն պաշտօնեայն դատաստանարանի յՄնդղիա և կը նախագահէ դատական բարձրագոյն ատենին: Ունի նաև պաշտօն պահելու թագաւորին, կամ ինչպէս այժմ՝ թագուհոյն կիսքը: Բաց աստի նախագահ կը բաղմի Լորտերուն խորհրդարանին մէջ, և ըստ աստիճանի կը համարուի բարձրագոյն անձը արքայական գերբաստանէնդուր:

որ, ի բաց առեալ Քէնթըրպրիի արքեպիսկոպոսը: Անոր տարեկան թոշակն է հաւասար 11,000 լիբրայի: Լորտ Քէյրնզ որոյ պատկերը կը դնենք հոս, երկու անգամ վարեց այս պաշտօնը, վասն զի Լորտ Աւագ դատաւորը ըլլալով Գահճին անդամոց մին, իւր պաշտօնէն կը հրաժարի երբ երկրին վարչութիւնը կը յանձնուի ուրիշ դահճի: Լորտ Քէյրնզ ոչ միայն էր Մեծին Բրիտանիոյ մեծագոյն քա-

ղաքագէտներէն և իրաւագէտներէն մին, այլ նաև էր շերմեւանդ քրիստոնեայ. իւր մահուան ժամանակը 1884 ին, էր նախագահ Լոնտոնի ազգատ և անէ զուրկ տղայքն հողացող ընկերութեան մը: Յիշեալ ընկերութեան նպատակն է ազատել այսպիսի տղայքը ապականիչ աղգեցութիւններէ և յարմարցունել զնոսա ուղիղ և պատուաւոր կենաց: Լորտ Քէյրնզ ըսած է. «Մենք չենք ջանար միայն հողաւանոնց ժամանակաւոր պէտքը, այլ կը նայինք որ զնենք անոնց սիրտերուն մէջ մեր օրհնեալ փրկչին Աւետարանին գիտութիւնը:» Անոր վերջին խօսքերն էին, «Հարկ է մենէ իւրաքանչիւրին հետեւի մեր մեծ վարդապետին քայլերուն: Թող բան մը չարգիլէ զմեզ հասնել այս նպատակին:»

ԱՆՁՆՈՒՐԱՅ ՍԵՐ

Շատ անգամ յոյժ ազնիւ առաքելութիւններ կը ածնուին վայրենեայ մէջ, — իրողութիւն՝ որ կ'իմացունէ մեզ թէ մարդիկ որոց համար քաղաքակրթութիւնը քիչ բան ըրած է, այսու ամենայնիւ կարող են ցուցնել թէ ազգակից են հրեշտակաց: Պատմութիւն մը հասած է Նոր Զելանդայէ որ կը հաստատէ թէ վայրենի մը կրնայ ոչ միայն գործնականապէս ծառայել իւր կրօնքին որուն դարձած է, այլ

նաև կարող է ունենալ այն սէրը որ մեծագոյն է քան զմահ :

Նոր Զեւանայի հրաբուխին բորբոքման սկսած ժամանակ Մատրի առնուն ցեղէն մարդ մը , Մոլի անուամբ , իւր Մարիամ կնոջ և երկու փոքրիկ տղայոց հետ ապաստան փնտուեցին իրենց խրճիթին մէջ :

“ Մը . Ֆէյրպրահըր (միսիոնարը) սորվեցուցած է մեզ ազօթք ընել Աստուծոյ և խաչեալ Քրիստոսին ,” ըսաւ Մոլի , և այսպէս ի ծուներ իջան և ազօթք ըրին : Շուտ ետքը խրճիթն երգիքը ջախջախուեցաւ լավայէն , կրակի պէս տաքցած քարերէն և տիղմէն : Մեծ տղան ազատելու համար՝ հայրը փաթիթեց զայն շալի մէջ , և գետնին վրայ դնելով , ծնկան վրայ եկած ծուեցաւ անոր վրայ որպէս զի տղան չփստուէր իջած լավայէն և քարերէն :


Առտուանց կանուխ Մոլի իւր ձեռուրները և ծունկերը գետնին վրայ դրած էր փոքրիկին պաշտպանութիւն ընելու համար , հոգ չէր ըներ լավային համար որ կ'իջնէր իւր կռնակին վրայ ցորչափ տղան ապահով էր :

Նոյն ժամանակ մայրը կը ջանար պաշտպանել միւս փոքրիկը , բայց առնոր ջանքերն էին պարտապաշտ , և լռիկ մաքառելով տարերայ հետ լավան յաղթող ելաւ մօրը և տղին , և սպաննեց եր :

նէն վերցունելով իւր փոքրիկ տղան , կանչեց իւր կնոջ ելլել և իրեն հետեի , երբ սոսկմամբ հասկցաւ որ իւր երկու սիրելիները լռիկ մեռած էին իւր քով :

Յետոյ հանուեցան անոնք : Մայրը նստած դիրքի մէջ էր իւր բազուկները տարածած մանկիկին վրայ պաշտպանել զայն իջնող աւազէն :

Թեպէտ հօր չարչարուող սէրը փրկեց մեծ տղան , մօր մեռնող սէրը կարող չեղաւ պահել մահը անոր մանկիկէն : Երկուքն ալ բրած էին ինչ որ կարող էին ընել մոռնալով իրենց անձը :



կուքն ալ : Մոլի , տեսնելով որ մուկը կը կոխէր և լավան շատ կը ծանրանար իւր վրայ , ըրաւ յուսահատական ճիգ մը մէկգի ընել զայն , և գետ :

ՅԻՇԱՏԱԿԻ ԵԿԵՂԵՑԻՆ Ի Ս . ԲԵԴՂԵՐՍՊՈՒՐԿ Պատկերը կը ներկայացունէ եկեղեցին որ կը կառուցուի այն տեղոյն

վրայ ուր Զարն Աղեքսանդր Բ . սպանուեցաւ 1881 մարտ 15 ին : Հազիւ թաղուած էր կայսրը , Մբ . Բեգրուպուրի բնակիչք առաջարկեցին կանգ :

ներ մատուռ հոն, բայց երբ մատուցին իրենց առաջարկութիւնը այժմու կայսեր, ըսաւ թէ այդ պարտի ըլլալ մեծ եւ շքեղ եկեղեցի մը: Այս նպատակաւ շատ նպատակներ եկան դիպուեցան Բուսիոյ ամէն կողմերէն: Ներկայացուած այլ և այլ յատակադիծներուն մէջ ընտրուեցաւ Սբ. Բեթըրսպուրկի մերձակայ վանքի մը մեծաւորին, իկնաչէի, ներկայացուցածը: Եկեղեցւոյն անկեան քարը գրուեցաւ 1884, Օգոստոս 6 ին, և չէնքը կ'ակնկալուի թէ պիտի աւարտի 1892 կամ 1893 ին: Շէնքին նիւթն է գործ մարմարին Ֆինլանտիոյ: Անոր գլխաւոր մուտքը կամ դուռն է արեւմտեան ծայրը ուր կը կանգնի բարձրագոյն աշտարակը 357 սոք բարձրութեամբ: Այս և վեց ցածագոյն աշտարակը ամէնքն ունին իրենց ծայրը սակեզոծ գմբեթ: Եկեղեցւոյն կեդրոնը ճիշդ այն տեղը ուր թրջեցաւ վախճանեալ Չարին արիւնով, պիտի շինուի փոքրիկ մատուռ մը շատ թանկագին մարմարինէ:

ՓՐԿԵԼ ՄԱՅՐԸ

Գերմանացի Պարոն Ֆոն Բարլթայն, որ գիրք մը գրած է Նիւ Եօրքի վրայ, կը պատմէ հետևեալը.

Ուոչինկթընի ծննդեան տարեդարձին կանգնած էի ամբոխի մը մէջ Հինգերորդ Պողոտայի և Չորեքտասաներորդ փողոցի անկիւնը սպասելով մեծ թափօրին: Ուռալին թմբուկը կը լուսէին հեռուանց, և ահա երիտասարդ մը շապիկով և գլխաբայ անցաւ խոնեալ բազմութեան մէջէն, և խօսեցաւ ոստիկան զինուորին որ կ'արգելէր ժողովուրդը սահմանէն դին անցնելէ:

«Սպայ», գոչեց երիտասարդը, «մայրս հիւանդ պառկած է վեցերորդ Պողոտայի մօտ տան մը մէջ, յանկարծ ծանրացաւ հիւանդութիւնը, և բժիշկը կ'ըսէ որ եթէ թափօրն անցնի մեր տան առջևէն, ձայներէն պիտի մեռնի մայրս:»

«Շատ լաւ», ըսաւ ոստիկանը, և զնա հոն թողուով ինք վագեց դէպի Պողոտան, ուր կեցաւ թափօրէն իբր քսան ոտք հեռի և մեծ աղաղակաւ գոչեց, «Կանգ առէք», վեր բռնելով թեթև եղեգնեայ գաւազան մը երկու ձեռքով:

Այս խօսքը փոխանցեցաւ թափօրին մէջ կարգէ կարգ: Պաշտօնակալ մը վազցուց իւր ձին, ծռեցաւ անոր վրայ և քանի մը խօսքեր փոխանակեցին ինք և ոստիկանը:

Իսկոյն լուսեցաւ հրամանի ձայն, «Յառա՛ջ, յառա՛ջ», և հագին բազմութիւնը քալեց յառաջ դէպի Չորեքտասաներորդ փողոցը առանց երբէք նուագարանաց հնչուելուն բացի թմբակի ըստ կարեւորյն ցած հարուածէ, այնուհետև լուսեցաւ «Այ կողմը դարձէք», և իբր յիսուն հազար զինուոր, որոց անթիւ բազմութիւն ժողովրդեան կը սպասէին տեսնել և ծա-



ՄԱՐՏԻՐՈՒՅ

փահարել, դարձան Չորեքտասաներորդ փողոցէն դէպի Պրոտուէյ փողոց, և սոյն փողոցէն վար իջան առանց նուագարանաց ձայնի մինչև այնչափ հեռացան որ հիւանդ կինն անհանդիստ չէր ըլլար:

Ոչ ոք հարցուց թէ ինչու համար կազմ և պատրաստ և հիւանալի կերպով սպառազինեալ մարդոց բանակ մը որոց շատն են հինաւուրց և պատերազմի մէջ ընդունած վէրքերու նշաններ կրող արի անձինք, դարձան իրենց ճամբէն մի միայն ոստիկան զինուորի խօզբով որ չունէր զէնք բայց եթէ փոքր գաւազան մը եղեգնեայ: Անոնց համար շատ շնչին գործ էր նուաճել ամբողջ քաղաքը, և սա-

կայն թափօրը կառավարող զօրավարը երբ ընդունեց երիտասարդին շնորհակալութիւնը, ըսաւ նմա թէ անոր յոյժ բնական խնդրուածը առաջարկուեցաւ աշնուականաց և զինուորաց: Եւ ճշմարիտ մարդ մը թէ՛ ըլլայ զինուոր և թէ՛ ոչ՝ կը յարգէ մօր մը նուիրական անունը:

ՄԱՐՏԻՐՈՒՅ

Այս պատկերը կը տեսնենք որ կը ներկայացուէ երկու տեսակ զօրութիւն:

Մին է լոկ անանական զօրութիւն, կը վերաբերի այն վայրենի գազանին որ իւր մկանական զօրութեան մի հարուածով կրնար սպաննել իւր զոհը, պատրաստութեամբ իւր սոսկալի ճաշը: Կը վերաբերի նաև անգութ բռնաւորին որ այս ֆրիստոնեայ ընտանիքը յափշտակեց իրենց բնակարանէն և բերաւ ամփիթէատրոնի հրապարակը որպէս զի անոնց մահուան տագնապներուն տեսարանը զուարճացունէր Հռոմայ նուստ և անանամիտ հասարակութիւնը: Ո՛հ, մե՛ծ էր կայսերաց զօրութիւնը: Անոնց մէկ խօսքովը կը շարժէին անյաղթելի բանակներ, և անոնց ձեռնաց մէջ էր զօրութիւնն ի վերայ կենաց և մահու իգրեթէ ամբողջ ծանօթ աշխարհին մէջ:

Միւսն է քրիստոնէական հաւատքին զօրութիւնը: Տես զայն այդ դիւցաղն մարդուն և անոր քով կեցող փափուկ կնոջ երեսին վրայ: Կայսրը կրնայ զանոնք նետել գաղանաց առջև, և գաղանք կրնան պատառել զանոնք անդամ անդամ, բայց ոչ կայսրը և ոչ գաղանք կարող են հանել ֆրիստոսի սէրը անոնց սիրտերէն, կամ հարկադրել զնոսա ուրանալ Անոր անունը: Անոնց չափահաս դուստրը ծածկած է երեսը իւր հօր հանդերձին քղանցին մէջ, բայց մենք չենք կարծեր թէ նա ճիշդ կ'արձակէ իւր սարսափէն, այլ մահաւանդ թէ կը մատուցանէ աջօթք մը այսպէս, «Ով Յիսուս, դուն որ տուած ես ինձ ընտրեալ հաւատարիմ ըլլալ մինչև հիմա, մի թողուր ինձ այս վերջին մեծ փորձութեան մէջ նախատինք բերել քեզ:»

Քրիստոնէական հաւատոյ զօրութիւնը քիչ հասկցած էր ի զնին կեցող ամ-

բոլոր, բայց ասոր պատճառն այն էր որ կայր էին անոնք: Կարող չէին տեսնել սպասաւորող հրեշտակները որ կը տանէին ազատեալ հոգիները դէպ յաւիտեանական ցնծութիւնը, և ոչ կարող էին նախատեսել թէ քանի մը տարի ետքը այն նոյն ֆրիստոնէական հաւատքը յաղթանակ պիտի կանգնէր Հռոմէական պետութեան վրայ, և պիտի տար կայսեր դնել խաչ իւր դրօշին վրայ սա խօսքով «Այսու նշանաւ յաղթեցեալ»:

Մերկի ընթերցողք, մեծ և փոքր, ունի՞ք այս յաղթական զօրութիւնը ձեր սիրտերուն մէջ:

Շ Ա Հ

Ազնիւ բնութիւնը վերջապէս յաղթող կ'ելլէ, և անոր բոլոր զոհողութիւնք շահու կը փոխուին: «Բնութիւնն է ամէն բան», ըսաւ Ամերիկացի քաղաքագէտ մը, երբ կը մեռնէր և ետ կը նայէր արկածալից կեանքի մը վրայ: «Նա որ կը յաղթէ պիտի ժառանգէ ամէն բան», այս է յաւիտեանական օրէնք մը:

Լրագրի մը մէջ կարդացինք յօդուած մը որ զուարճալի ոճով կը լուսաբանէ այս ճշմարտութիւնը:

Ինը տարեկան աշխոյժ և այրական կերպարանքով պատանի մը Նիւ Եորքի կեդրոնական Մեծ Կայարանը մտաւ, նայելով իւր խոշոր և սև աչուքներով մարդու մը վրայ և ըսաւ, «Մուճակներդ ներկի՞մ, Տէր իմ»:

«Կ'ուզեմ ներկել տալ մուճակներս», ըսաւ մարդը:

«Ուրեմն ուրախ կ'ըլլամ եթէ թոյլ տաք ինձ ներկել զանոնք, Տէր», պատասխանեց տղան:

«Ժամանակ կա՞յ ինձ համեմել կառախումբին»:

«Ժամանակ պէտք չէ կորսնցունենք, Տէր, ես կը լնիցանեմ դործս կտուս խումբին ճամբայ ելլեմն առաջ»:

«Իրա՞ւ կ'ըսես»:

«Այո՛, Տէր, ներկեմ մուճակներդ»:

Եւ երկու վայրկեանէն առաւ ներկը իւր ծնգաց վրայ և սկսաւ ներկել մուճակները:

«Չըլլայ որ զիս ուշ թողուս», ըսաւ մարդը:

«Ոչ, Տէր», ըսաւ տղան մինչ երկու վրձինները մէկտեղ կը քսէր մուճակին արագ արագ:

«Ի՞նչ է անունդ»:

«Փոլ Ֆէյ»:

«Հայրդ ո՞րք է»:

«Ոչ, Տէր, մեռած է — չունիմ ուրիշ մէկը բայց միայն մայրս, և փոքր տղաքը: Կառախումբը կ'երթայ, Տէր»:

Մարդը գրպանը խօթեց իւր ձեռքը և հանելով արծաթ կէս տողարնոց մը, տուաւ տղին, որ մանր դրամ հանեց գրպանէն և սկսաւ հաշուել թէ որչափ ստակ ետ տարու էր: Բայց մարդը չսպասելով վաղեց մտաւ կառախումբը վախնալով որ գուցէ ուշ պիտի մնար, և դեռ տղան անոր հասած կառախումբը մեկնեցաւ:

Երկու տարի ետքը նոյն մարդը գործով եկաւ Նիւ Եորք: Մոռցած էր կոչիկ ներկող տղան, և քառասուն և հինգ սէնթը որ մնացած էր անոր քով: Մինչ կը շրջէր փողոցը աստ և անդ իւր հոն հասնելուն յաջորդ օրը, պատանի մը մօտեցաւ անոր և ըսաւ, «Ասկէ առաջ եկած էք հոս»:

«Այո», պատասխանեց մարդը: «Ե՞րբ»:

«Իբր երկու տարի առաջ»:

«Ներկեցի՞ կօչիկներդ կեդրոնական Մեծ Կայարանը»:

«Տղայ մը ներկեց»:

«Իս եմ այն տղան, և կը պարտիմ ձեզ քառասուն և հինգ սէնթ: Չանացի այն ատեն հասնիլ կառախումբին բայց չկրցայ, ահա ձեր ստակը: Կը վախնայի թէ բնաւ կարող պիտի չըլլայի ատենը զձեզ դարձեալ: Չունէի նպատակ իւրացունել ձեր ստակը»:

Եւ տղան զայս ըսելով հանեց մանր դրամներու քսակ մը և համբերով քառասուն և հինգ սէնթ, մատոյց մարդուն:

Նամակը որ գրուած էր յԱթլանթա (Միաց. Նահանգաց) և կը պատմէ վերոյիշեալ դիպումը իւր հաճոյական վախճանաւը, կը յիշէ թէ մեռած է մօտերս Մր. — , այդ քաղաքին ամենէն ուղիղ և պատուաւոր բնակչաց մին: Նա էր այն տղան որ ներկեց ժամանակաւ Նիւ Եորք վերոյիշեալ մարդուն կօչիկները Մեծ Կայարանին մէջ, և ետ դարձուց իւր քով մնացած մանր ստակը:

Սա իրողութիւնը թէ Նիւ Եորքի այն ազնուականը այնչափ սիրեց փոքրիկ փոյր որ որդեգիր ըրաւ զնա իրեն, միայն կ'աւելցունէ պարադայ մը կենաց պատմութեանն այն տղուն որ հաւանականապէս պիտի մեծնար և ըլլար բարի մարդ առանց հարուստ բարեկամաց ձեռնտուութեան խի: Պարզ ուղղութեան միակ գործ մը յերևան հանեց նորա ազնիւ բնութիւնը, և նորա զոհողութիւնը որ պէտքի պահէր ուղիղ սկզբունք, եղաւ շահ ներկայ և յաւիտեանական:

ԲԱՐԵՍԻՐՏ ՄԻՋԱՆԵՐ

Մտեր Գիրք հռչակուող ըրած է միջիւնները աշխատասիրութեան և նախատեսութեան մասին, և այժմու բնախօսք կը գտնեն թէ բաց ի միջիւնէն քիչ կենդանիք կան որ արժանի են ուսման առարկայ ընելու: Այս միջառք ոչ միայն հիմնալի են իրենց մտացի լինելուն կողմանէ, այլ կը ցուցնեն մեծ հոգածութիւն իրարու բարեկեցութեան համար ինչպէս կ'երևի հետագայ դէպքէն, որ առնուած է բնախօսութեան վրայ ճառող գիրքէ մը:

Օր մը մինչ կը դիտէի, կ'ըսէ հեղինակը, պաշար կրող միջնոց երթեկեղ, անոնց միջոյ վրայ դրի փոքրիկ խիճ մը որպէս զի կեցունէի զայն: Ուրիշ միջիւն մը որ անոր մօտ էր, երբ եկաւ այն ինչ տեսաւ անոր կացութիւնը, ետ վաղեց յուզեալ կերպով մը հաղորդել լուրը միւսներուն: Մըջիւնք փութացին գալ յօգնութիւն: Ոմանք զարնուեցան խճին և ջանացին շարժել զայն, այլք բռնեցին կալանաւորը սրունքէն և քաշեցին այնպէս ուժգին որ վախցայ թէ սրունքը պիտի փրթէր, բայց շարունակեցին մինչև որ աղատեցին իրենց ընկերը:

Այնուհետև ծածկեցի միջիւններէն մին կտոր մը կաւով միայն անոր բողկուկներուն ծայրերը դուրս թողլով: Շուտով իմացան անոր ընկերք, որք անմիջապէս սկսան գործի, և կտոր կտոր առնելով կաւէն շուտով աղատեցին զայն: Ուրիշ ատեն մը տեսայ որ անոնցմէ ոմանք կ'անցնէին տեղէ մը: Ասոնց մին բանտեցի կտոր մը կաւի ներքև մըջնոց ճամբէն քիչ մը հեռի, գլուխը կաւէն դուրս: Քանի մը միջիւնք անցան անոր քովէն, բայց ի վերջոյ անոնցմէ մին տեսաւ զայն, և աշխատեցաւ դուրս քաշել բայց չկրցաւ: Անմիջապէս ճամբայ ելաւ վաղերով, և ետ այնպէս կարծեցի թէ երեսի վրայ թողուց իւր ընկերը: Բայց ուրիշ նպատակաւ չէր գացած այլ միայն օգնութեան համար, վասն զի քիչ ժամանակէն վաղելով եկան տասը տասներկու միջիւններ, յայտնապէս լրովին տեղեկացած ըլլալով ինքրոյն պարագայից վրայ, քանզի ուղղակի եկան իրենց բանտարկեալ ընկերին վրայ, և շուտով աղաատ ձակեցին զայն:

Յուզումը և եռանդը որով յառաջ կը տանէին իրենց անձանձիր և անխոնջ աշխատութիւնները չէր կրնար աւելի մեծ ըլլալ եթէ նոքա ըլլային մարդկային էակները:

Յուզումը և եռանդը որով յառաջ կը տանէին իրենց անձանձիր և անխոնջ աշխատութիւնները չէր կրնար աւելի մեծ ըլլալ եթէ նոքա ըլլային մարդկային էակները:

Աւերկայի Մեծիտոյց ընկերութեան կողմէն, Արտաձեւութիւն Բ. ԿՐԻՆ Տնօրէն—Խմբագիր Ս. ՊԱՐԵՆԸՄ Ճինճանճըլար եօգուշու, Ամերիկայի Խան:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՎՈՐ ՊՕՅԱՅԱՆՆ